ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ա-26

ք. Երևան « » « » 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարկոմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայություններ** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային** օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **3 000 000** (երեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 29-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**«Կարկոմ» ՍՊԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**հասցե՝ ք. Երևան Մազմանյան 1**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**Բանկ՝ Ակբա բանկ**
գործառնական վարչություն	**Հ/Հ 220453330395000**
Հ/Հ 900011046373	**ՀՎՀՀ 00141987**
ՀՎՀՀ 02882913	**Հեռ: 374 96 924 104**
Հեռ. 010 59-61-52	**Էլ. Փոստ: Sto-karcomauto@rambler.ru**
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	
_____ Ա. Ֆիդանյան	Ստորագրող ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ 2710790270
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/	2026-02-05 11:04:53 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
(ստորագրություն)	
Կ.Տ	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ա-26 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ CPV-50111130/4	Ըստ հավելված 1.1-ի	դրամ	3 000 000	1	ք. Երևան Ծ. Իսակովի 7	Պայմանագիրը ուժի մտնելուց հետո 1 տարի ժամկետով

Հավելված N 1.1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Անվանումը	**Տեխնիկական բնութագիրը և այլ պահանջները**
Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	<<Մուրան>> ՍՊԸ-ից 2023թ. ընթացքում ձեռք բերված <<Միցուբիշի>> մակնիշի տրանսպորտային միջոցների երաշխիքային սպասարկման ծառայություն/ ավտոմեքենաների տվյալները տես ստորև ներկայացված աղյուսակում
Պարտադիր պայման	Օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված, գործարանային արտադրության և <<Միցուբիշի>> ֆիրմայի

Հ/Հ	Ծառայությունների անվանումներ	Չ/մ	Mitsubishi L 200
	1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
1	Համակարգչային ախտորոշում	հատ	5050
2	Շարժիչի կափույրի հանում և տեղադրում	հատ	20200
3	Շարժիչի գլխիկի հանում և տեղադրում	հատ	121200
4	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	հատ	80800
5	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	հատ	55550
6	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	հատ	55550
7	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	հատ	5050
8	Հանգույցների յուղում	հատ	2020
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
9	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	հատ	3030
10	Օդի զտիչի փոխարինում	հատ	2020
11	Օդորակիչի զտիչի փոխարինում	հատ	3030
12	Վառելանյութի մղիչի հանում և տեղադրում	հատ	10100
13	Ֆորսունկաների հանում և տեղադրում	հատ	10100
14	Ֆորսունկաների լվացում	հատ	10100
15	Վառելանյութի փողրակի հանում և տեղադրում	հատ	10100
16	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	հատ	15150
17	Ակսելերատորի հանում և տեղադրում	հատ	5050
18	Ակսելերատորի ադապտացում	հատ	5050

19	Ակսելերատորի մաքրում	հատ	3030
	3. Սառեցման և արտածման համակարգ		
20	Փոկի հանում և տեղադրում	հատ	5050
21	Հովհարի հանում և տեղադրում	հատ	10100
22	Ռադիատորի հանում և տեղադրում	հատ	15150
23	Ռադիատորի վերանորոգում	հատ	30300
24	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում	հատ	60600
25	Վառարանի շարժիչի հանում և տեղադրում	հատ	60600
26	Թերմոստատի փոխարինում	հատ	15150
27	Ջրի պոմպի փոխարինում	հատ	55550
28	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	5050
29	Խլարարի հանում և տեղադրում	հատ	5050
30	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում	հատ	5050
31	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	5050
32	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	հատ	5050
33	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	հատ	10100
	4. Կախոց		
34	Տրավերսի հանում և տեղադրում	հատ	30300
35	Դիմացի կամրջակի բարձիկի փոխարինում	հատ	10100
36	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	հատ	10100
37	Փոխանցման տուփի բարձիկի հանում և տեղադրում	հատ	10100
38	Փոխանցման տուփի հանում և տեղադրում	հատ	80800
39	Փոխանցման տուփի նորոգում	հատ	80800

40	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	հատ	10100
41	Անվակունդի հանում և տեղադրում	հատ	10100
42	Անվակունդի առանցքակալի փոխարինում	հատ	2020
43	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	10100
44	Ներքևի լծակի հանում և տեղադրում	հատ	7070
45	Ներքևի լծակի վռանի փոխարինում	հատ	1515
46	Վերևի լծակի հանում և տեղադրում	հատ	5050
47	Վերևի լծակի վռանի փոխարինում	հատ	1515
48	Առջևի աջ կամ ձախ ձգանի հանում և տեղադրում	հատ	5050
49	Գնդե հոդակապի հանում և տեղադրում	հատ	5050
50	Ձգանի ծայրակալի հանում և տեղադրում	հատ	3030
51	Կայունարարի վռանների փոխարինում	լրակազմ	6060
52	Հետևի զսպակի հանում և տեղադրում	հատ	10100
53	Հետևի զսպակի վռանի փոխարինում	հատ	1010
54	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	հատ	5050
55	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	հատ	2525
56	Կցորդման սկավառակների հանում և տեղադրում	հատ	80800
57	Կցորդման սկավառակների նորոգում	հատ	90900
58	Փոխանցման տուփի յուղի փոխարինում	հատ	2525
59	Բաշխիչ տուփի յուղի փոխարինում	հատ	2525
60	Կամրջակի յուղի փոխարինում	հատ	2525
61	Անվաբացքի կարագավորում	հատ	12120
	5. Ղեկային մեխանիզմ		

62	Ղեկային կալունի հանում և տեղադրում	հատ	30300
63	Ղեկային կալունի վերանորոգում	հատ	90900
64	Ղեկային ձողի հանում և տեղադրում	հատ	25250
65	Ղեկային ձողի նորոգում	հատ	20200
66	Հիդրոուժեղարարի փոկի փոխարինում	հատ	5050
	6. Արգելակային համակարգ		
67	Արգելակային համակարգի օդահանում	հատ	4040
68	Սուպորտի հանում և տեղադրում	հատ	5050
69	Սուպորտի վերանորոգում	հատ	5050
70	Արգելակային փողրակի փոխարինում	հատ	5050
71	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	3030
72	Հետևի արգելակային կոճղակների փոխարինում	հատ	10100
73	Առջևի արգելակային սկավառակի հանում և տեղադրում	հատ	5050
74	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում	հատ	5050
75	Արգելակային սկավառակի հղկում	հատ	6060
76	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	հատ	5050
77	Ձեռքի արգելակի կարգավորում	հատ	3030
	7. Էլեկտրասարքավորում		
78	Էլեկտրասարքավորման վերանորոգում	ժամ	8080
79	Լապտերի լամպի փոխարինում	հատ	2020
80	Էլեկտրական տվիչների փոխարինում	հատ	3030
81	Էլեկտրական անջատիչների փոխարինում	հատ	2525

82	Վառոցքի կոճի փոխարինում	հատ	3030
83	Վառոցքի մոմերի փոխարինում	հատ	6060
84	Մեկնարկիչի հանում և տեղադրում	հատ	10100
85	Մեկնարկիչի նորոգում	հատ	10100
86	Գեներատորի հանում և տեղադրում	հատ	10100
87	Գեներատորի նորոգում	հատ	10100
88	Մագնիտաֆոնի հանում և տեղադրում	հատ	10100
89	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	18180
	8. Այլ ծառայություններ		
90	Անիվի հանում և տեղադրում	հատ	505
91	Անվադողի քանդում և հավաքում	հատ	1010
92	Անիվի հավասարակշռում	հատ	1010
93	CO-զոդման աշխատանքներ	սմ	1010
94	Խառատային աշխատանքներ	կտոր	5050
95	Փականագործի աշխատանքներ	ժամ	8080
	Պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		Mitsubishi L 200
	1.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
1.1	Յուղ շարժիչի սինթետիկ	լիտր	5050
2.1	Յուղի զտիչ	հատ	5250
3.1	Շարժիչի օդի զտիչ	հատ	8080
4.1	Շարժիչի կափույրի միջադիր	հատ	12120
5.1	Շարժիչի գլխիկի միջադիր	հատ	20200

6.1	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկ	հատ	10100
7.1	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկ	հատ	10100
8.1	Շարժիչի ատամնավոր փոկ	հատ	25250
9.1	Փոկի հոլովակ	հատ	20200
10	Փոկի ձգան	հատ	40400
11	Շարժիչի յուղի պոմպի ատամնավոր փոկ	հատ	22220
12	Վառոցքի մոմ	հատ	9595
13	Ֆորսունկա	հատ	55550
14	Վառելանյութի մղիչ	հատ	232300
15	Վառելանյութի զտիչ	հատ	25250
16	Վառելանյութի փողրակ	հատ	30300
17	Օդի զտիչ	հատ	25250
18	Օդորակիչի զտիչ	հատ	5050
19	Յուղի տվիչ	հատ	7575
20	Մաքրող հեղուկ ABRO	հատ	2020
	2. Սառեցման և արտածման համակարգ		
21	Ռադիատոր	հատ	222200
22	Ընդարձակող բաք	հատ	18180
23	Հովացման համակարգի փողրակ	հատ	25250
24	Թերմոստատ	հատ	12120
25	Ջրի պոմպ	հատ	78780
26	Սառեցման հեղուկ	լիտր	3030
27	Գեներատորի փոկ	հատ	14140

28	Ջրի պոմպի փոկ	հատ	12120
29	Կոնդիցիոների փոկ	հատ	9090
30	Կրոնշտեյն	հատ	15150
31	Անուր (Խամուտ)	հատ	1010
32	Վառարանի ռադիատոր	հատ	156550
33	Վառարանի շարժիչ	հատ	111100
34	Տրանսմիսսիոն յուղ	լիտր	12120
35	Հերմետիկ	հատ	3030
	3. Կախոց		
36	Շարժիչի բարձիկ	հատ	30300
37	Փոխանցման տուփի բարձիկ	հատ	73730
38	Փոխանցման տուփի բարձիկ հեծանի	հատ	16160
39	Դիմացի կամրջակի բարձիկ	հատ	12120
40	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	հատ	33330
41	Անվակունդի առանցքակալ	հատ	50500
42	Հարվածամեղմիչի թասակ	հատ	30300
43	Ձսպակի վռան	հատ	10100
44	Առջևի ցնցամեղմիչ	հատ	85850
45	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	հատ	6060
46	Ներքևի լծակի վռան	հատ	11110
47	Վերևի լծակի վռան	հատ	10100
48	Գնդե հոդակապ	հատ	35350
49	Առջևի կայունարարի վռան	հատ	4545

50	Կայունարարի կանգնակ	հատ	22220
51	Հետևի ցնցամեղմիչ	հատ	76760
52	Աջ կամ ձախ ձգան	հատ	32320
53	Ձգանի ծայրակալ	հատ	23230
54	Ձգանի փոշեթիկնոց	հատ	9090
55	Կցորդման տարվող սկավառակ	հատ	85850
56	Կցորդման տանող սկավառակ	հատ	95950
57	Կցորդման առանցքակալ	հատ	20200
58	Հետևի կարդանային լիսեռի խաչուկ	հատ	25250
59	Ղեկային կալունի վերանորոգման հավաքածու	հատ	60600
60	Հիդրոուժեղարարի փոկ	հատ	23230
61	Հիդրոուժեղարարի յուղ	լիտր	10100
62	Քսայուղ լիտոլ 100 գրամ	հատ	1515
63	Քսայուղ Շռուս 100 գրամ	հատ	1820
	4. Արգելակային համակարգ		
64	Արգելակային փողրակ	հատ	15150
65	Սուպորտի վերանորոգման հավաքածու	հատ	15150
66	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	56560
67	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	56560
68	Առջևի արգելակային սկավառակ	հատ	101000
69	Հետևի արգելակային սկավառակ կամ թմբուկ	հատ	121200
70	Արգելակման կոճղակներ	հատ	24240
71	Արգելակային հեղուկ	հատ	4040

	5. Էլեկտրասարքավորում		
72	Լամպ	հատ	3030
73	Էլեկտրական անջատիչ	հատ	3030
74	Վառոցքի կոճ	հատ	47470
75	Մեկնարկիչ	հատ	333300
76	Գեներատոր	հատ	373700
77	Գեներատորի դիոդային կամրջակ	հատ	30300
78	Ռելե	հատ	12120
79	Բենդեքս	հատ	30300
80	Ավտոմատ	հատ	35350
81	Ապակելվացիչ	հատ	4040
82	Ապակելվացիչի հեղուկ	լիտր	3030
83	Մագնիտաֆոն	հատ	55550
84	Մարտկոց	հատ	65650

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011046373
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Կարկոմ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան Մազմանյան 1
Բանկ՝ Ակբա բանկ
Հ/Հ 220453330395000
ՀՎՀՀ 00141987
Հեռ: 374 96 924 104
Էլ. Փոստ: Sto-karcomauto@rambler.ru

Ստորագրող
ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
2710790270

2026-02-05 11:05:53 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված N 2
« » 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ա-26 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/4	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ		750 000	750 000	1 500 000	1 500 000	1 500 000	2 250 000	2 250 000	2 250 000	3 000 000	3 000 000	3 000 000	**3 000 000**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011046373
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Կարկոմ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան Մազմանյան 1
Բանկ՝ Ակբա բանկ
Հ/Հ 220453330395000
ՀՎՀՀ 00141987
Հեռ: 374 96 924 104
Էլ. Փոստ: Sto-karcomauto@rambler.ru

Ստորագրող
ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
2710790270

2026-02-05 11:11:48 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ.Տ)

Հավելված 3
« » 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ա-26 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ա-26 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4

« » 2026թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2026/Ա-26 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

FIDANYAN ARA
3108790099

Digitally signed by
FIDANYAN ARA
3108790099
Date: 2026.02.06
14:52:50 AMT